

Եւ ինձ այնպէս կը թուեր թէ մարդկանց ամենէն երջանիկը ես եմ:
Բայց իմ այս յանդգնութիւնս, իմ չափեա վեր բարձրանալս անհաճոյ
թուեցան աստուծոյ՝ եւ զիս պատմեց. ես արժանի էի իւր
պատուհասին, բայց իմ պատճառովս երբ կը մտածէի թէ դու անսման
հրեշտակ դու նաեւ կը քաշէիր. դու թագուհի լինելու ծիրանիներու եւ
բեհեզներու համար ստեղծուած, սուգի եւ բանտի էիր
դատապարտեալ եւ իմ մեղացս համար, այս էր ահա, որ ես իմ անձիս
չէի կրնար ներել, եւ քու աչացդ երեւիլ ու թողութիւն նաեւ խնդրել չէի
համարձակել:

— Գիտէ՞ր, Յովնան, իմ հոս լինիլս:

— Առջի տասը տարին չէի գիտեր. երկու տարի գողի պէս կը պտըտէի
բոլոր Հայաստան, առանց համարձակելու անունդ բերնես հանել,
բախտեն սպասելով, որ իմանամ թէ ո՞ր ես: Վերջը յուսահատ թողի
զնացի Յունաստան եւ զինուոր եղայ եւ տեսայ, որ օտար հող զիս
չուզէր ընդունիլ. դարձայ եկայ Տարօն, եւ մեր լեռնցիք զիս
պարտաւորեցին եւ ես անօգուտ կեանք մը օգտակար ընելու համար
կ'երթայի Բագարատ իշխանին Սասնոյ գործերը կարգի դնելու: Հոն
դիպուածով իմացայ թէ Արտանուշի վանքն է իշխանուհիդ:

— Եւ անգամ մը գալ մտքեդ չանցա՞ւ:

— Պէտք է խոստովանիմ ճշմարիտը. ամէն տարի կ'ուզայի ճորոխի
դիմացի ափը թուփերու մէջ օրերով կը սպասէի ինչպէս կը վայելէր
ինձ պէս յանցաւորի մը, եւ երբ զքեզ կը տեսնէի, որ կը ճեմէիր
առանձին, ես այսպէս ծունկի վրայ կը խնդրէի հաստուծոյ, որ
Տիրուհիս երջանիկ ընէ: Կը փափագէի, որ ձայնդ լսեմ, բայց անիրաւ
ճորոխ այնչափ շառաչանք ունէր, որ կարելի չէր լսել: Բայց դարձեալ
այն տեսութեամբ ծարաւս կ'անցնէի եւ գոհ ու երջանիկ կը դառնայի
Սասուն: Այս ամառ միայն չի կրցի գալ:

— Ե՛լ, Յովնան, նստէ քովս, եւ մտիկ ըրէ թէ ի՞նչ պիտի ըսեմ: